



ADB

# Ծրագրի հատուկ համակարգողի եզրափակիչ հաշվետվությունը

---

Ծրագիր՝ թիվ 42417-023  
Հաստատման համարը՝ Վարկ 2752  
2017թ. դեկտեմբեր

## Հայաստան. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր - Տրանշ 1 (Բողոքը ստացել ենք 2017թ. սեպտեմբերի 5-ին)

Այս փաստաթուղթը հրապարակվում է ԱԶԲ-ի՝ Հանրության հետ կապի 2011 թվականի քաղաքականության համաձայն:

**Ասիական Զարգացման Բանկ**

Որևէ երկրի համար ծրագիր կամ ռազմավարություն մշակելիս, որևէ նախագիծ ֆինանսավորելիս կամ որոշակի վայրի կամ աշխարհագրական տարածքի մասին որևէ նշում անելիս կամ դրան հղում կատարելիս, Ասիական զարգացման բանկը մտադրություն չունի որևէ կերպով դատողություն անել որևէ վայրի կամ աշխարհագրական տարածքի իրավաբանական կամ այլ կարգավիճակի մասին:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԶԲ	-	Ասիական Զարգացման Բանկ
ՀՀ դրամ	-	հայկական դրամ
ՀՄՆ	-	Հայաստանում մշտական ներկայացուցչություն
ՈՒԳՊ	-	Ուղղիչ գործողությունների պլան
ԵՄՆՏ	-	Երկրում մշտական ներկայացուցչության տնօրեն
ԿԱԱՎ	-	Կենտրոնական և Արևելյան Ասիայի վարչություն
ԵՄՆՏՏ	-	Երկրում մշտական ներկայացուցչության տնօրենի տեղակալ
ԲԼՄ	-	Բողոքների լուծման մեխանիզմ
ՀՏ	-	Հարկադիր տարաբնակեցում
ՀՕՏ	-	Հողի օտարում և տարաբնակեցում
ՀՕՏԾ	-	Հողի օտարման և տարաբնակեցման ծրագիր
ԾՀՀԳ	-	Ծրագրերի հատուկ համակարգողի գրասենյակ
ԾԻԳ	-	Ծրագրի իրականացման գրասենյակ
ԾՀՀ	-	Ծրագրերի հատուկ համակարգող
ՔԿԶՆԾ	-	Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր
ԱՄՆ դոլար	-	Միացյալ Նահանգների դոլար
ԵՔ	-	Երևանի քաղաքապետարան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	i
I. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	
A. Ծրագիրը	1
B. Բողոքը	2
C. Քննության ենթակա լինելու մասին որոշումը	3
II. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ	
A. Նպատակներ և մեթոդաբանություն	3
B. Շահագրգիռ կողմերի բացահայտում	4
1. Բողոքաբերը	4
2. Երևանի քաղաքապետարանը	4
3. ԱԶԲ-ի մշտական ներկայացուցչությունը Հայաստանում	4
C. Առաքելության արդյունքները և համաձայնեցված գործողությունները	5
D. Քաղված դասերը	7
III. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	7
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԱԶԲ-ին ուղարկված՝ բողոքի նամակը	9
ՀԱՎԵԼՎԱԾ 2 Վնասների և տեղում անցկացված գնահատման լուսանկարները	10

**ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիրը (ՔԿԶՆԾ) ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից՝ բազմատրանշ ֆինանսավորման ծրագրի ներքո: Տրանշ 1-ը հաստատվել էր 2011թ. մայիսի 9-ին և կազմել 60 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ Տրանշ 2-ը հաստատվել էր 2015 թվականի սեպտեմբերի 29-ին և կազմել 150 միլիոն ԱՄՆ դոլար: Տրանշ 1-ի շրջանակներում Ծրագիրը բաժանված է 2 ենթածրագրի: Ենթածրագիր 2-ը՝ 3.7 կմ երկարությամբ, ընդգրկում է Արշակունյաց պողոտայի ընդլայնումը, Արտաշատի խճուղուց մինչև Շիրակի փողոց միացումը և Արտաշատի մայրուղու ընդլայնումը մինչև Նորագավիթի 1-ին փողոց: Իրականացնող գործակալությունը Երևանի քաղաքապետարանն է (ԵՔ):

Ծրագիրը դասակարգվել է որպես Ա կարգի ծրագիր՝ հարկադիր տարաբնակեցման (ՀՏ) պատճառով: Ենթածրագիր 2-ի ազդեցությունը զգալի էր, քանի որ ավելի քան 200 մարդ կրել էր այդ ազդեցությունը, որի համար մշակվել և հաստատվել էր Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագիր (ՀՕՏՕ 3), ԱԶԲ-ի կողմից՝ 2014 թվականի մայիսի 12-ին, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ 2014 թվականի սեպտեմբերի 11-ին: Բողոքաբերի տունը ընդգրկված է ՀՕՏՕ 3-ում: ՀՕՏՕ-ի իրականացումը սկսվել էր 2014 թվականին և ավարտվել՝ 2015 թվականի հուլիսին: Ենթածրագիր 2-ի շրջանակում շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2015 թվականի սեպտեմբերին, իսկ շահագործումը սկսվել էր 2016 թվականի դեկտեմբերին:

2017 թվականի սեպտեմբերի 5-ին Ծրագրերի հատուկ համակարգողի գրասենյակը (ՕՀՀԳ) մի ընտանիքից (Բողոքաբերից) բողոք էր ստացել, որը 2017 թվականի սեպտեմբերի 29-ին ճանաչվել էր խնդիրների լուծման գործառույթի շրջանակներում քննության ենթակա: Բողոքաբերի մտահոգությունը վերաբերում էր ճանապարհի շինարարության և/կամ շահագործման ազդեցությանը իր տան վրա: Սկզբնական շրջանում բողոքաբերը իր մտահոգությունները հայտնել էր 2015 թվականի հոկտեմբերին՝ նամակներ ուղղելով Հայաստանում ԱԶԲ-ի մշտական ներկայացուցչությանը (ՀՄՆ) և Ծրագրի հետ կապված բողոքների լուծման մեխանիզմին (ԲԼՄ): Սակայն հարցի համապատասխան լուծման համար հնարավոր չեղավ ժամանակին փոխադարձ համաձայնություն ձեռք բերել:

ՕՀՀԳ-ի ուսումնասիրություն և գնահատում անցկացնող առաքելությունը գործուղվել էր Երևան 2017 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 18-ը: Քննարկումներ էին անցկացվել ՀՄՆ, ԵՔ ներկայացուցիչների և Բողոքաբերի (այդ թվում նաև նրա իրավաբանի) հետ: ՀՄՆ-ի կողմից ֆինանսավորված՝ անկախ ինժեներական ուսումնասիրության միջոցով Ծրագրերի հատուկ համակարգողը (ՕՀԿ) հաստատեց, որ Բողոքաբերի ունեցվածքին զգալի վնաս է հասցվել, կամ նախկինում առկա քայքայումները վատթարացել են Ծրագրի հետևանքով: Սերտորեն համագործակցելով Երկրում մշտական ներկայացուցչության տնօրենի (ԵՄՆՏ) և տնօրենի տեղակալի (ԵՄՆՏՏ) հետ, ՕՀՀԳ-ի առաքելությունը նպաստեց պայմանավորվածության ձեռք բերմանը այն գործողությունների մասին, որոնց նպատակը Բողոքաբերի և ԵՔ-ի միջև փոխհատուցման համաձայնագրի արագ ձևակերպումն էր:

ԵՄՆՏ-ն հետագայում ղեկավարեց գործողությունների ընթացքը, այդ թվում, ի թիվս այլոց՝ (i) ներգրավելով հայ իրավաբանի՝ հետագա բանակցություններին աջակցելու և Բողոքաբերի և ԵՔ-ի միջև իրավաբանական համաձայնագրի նախագիծը կազմելու նպատակով, և (ii) ուղղակիորեն միջնորդելով փոխհատուցման գումարի վերաբերյալ

համաձայնության ձեռք բերման գործընթացին: Այս աջակցությունը խիստ կարևոր էր պատշաճ ժամկետներում տվյալ գործը ավարտին հասցնելու համար: Կազմվել էր ԱԶԲ-ի Երաշխիքների քաղաքականության դրույթներին համապատասխանող՝ Ուղղիչ գործողությունների պլան (ՈԻԳՊ), որտեղ Բողոքաբերին վճարման ենթակա փոխհատուցման գումարի չափը սահմանվել էր տեխնիկական քննության հիման վրա: 2017 թվականի դեկտեմբերի 5-ին Բողոքաբերը և ԵԶ-ն ստորագրել են իրավաբանական համաձայնագիրը, իսկ 2017թ. դեկտեմբերի 7-ին Բողոքաբերին վճարվել է 5,971,031.63 ՀՀ դրամ (12,388 ԱՄՆ դոլար) կազմող՝ համաձայնեցված փոխհատուցումը: Համաձայնագրով նախատեսվում է բավարար ֆինանսավորում՝ վերանորոգելու բոլոր այն վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառված են եղել կամ վատթարացել են Ծրագրի շրջանակներում շինարարության և/կամ շահագործման հետևանքով: Բողոքաբերը համաձայնել է ավարտել համաձայնեցված նախագծում նշված աշխատանքները վճարման պահից մեկ տարվա ընթացքում: ՀՄՆ-ը կաշակցի ստուգման գործընթացին, որպեսզի հաստատի աշխատանքների ավարտը համապատասխան փուլերում, և կտեղեկացնի ԾՀՀԳ-ին այդ մասին:

Ընդհանուր առմամբ, այս դեպքը լավ օրինակ է, թե ինչպես պետք է աշխատի Հաշվետվողականության մեխանիզմի խնդիրների լուծման գործառույթը. ԾՀՀ-ի/ԾՀՀԳ-ի կողմից համապատասխան և պատեհաժամ միջամտություններով՝ ապահովելու հիմնական շահագրգիռ կողմերի միջև համաձայնության ձեռք բերումը, և, գործառնությունների վարչության (տվյալ դեպքում՝ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության (ԿԱԱՎ)/ՀՄՆ-ի) կողմից ղեկավարվող հետագա գործողությունների իրականացմամբ: Բողոքաբերը բավարարված է ԱԶԲ-ի միջամտության արդյունքներով և ԾՀՀԳ-ն այս բողոքը համարում է փակված: Բողոքի կառավարման ժամանակացույցը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Բողոքի կառավարման ժամանակացույցը**

1. Քննության ենթակա լինելու մասին գնահատման ավարտը	2017 թվականի սեպտեմբերի 29-ին
2. Ուսումնասիրություն և գնահատում իրականացնող առաքելություն	2017 թվականի հոկտեմբերի 16-ից -18-ը
<b>Գործողությունների պլանի իրականացումը</b>	
3. Աշխատանքների ծավալի և ծախսերի նախնական հաշվարկը	2017 թվականի նոյեմբերի 15-ին
4. Փոխհատուցման գումարի շուրջ համաձայնության ձեռքբերում	2017թ. նոյեմբերի 30-ին
5. Երևանի քաղաքապետարանի և Բողոքաբերի միջև իրավաբանական համաձայնագիր	2017թ. դեկտեմբերի 5-ին
6. Բողոքաբերը ետ է կանչում դատական գործը	2017թ. նոյեմբերի 30-ին
7. Համաձայնեցված փոխհատուցման գումարի վճարումը Բողոքաբերին	2017 թվականի դեկտեմբերի 7-ին
8. ԾՀՀԳ-ի կողմից բողոքի գործի փակումը	2017 թվականի դեկտեմբերի 15-ին

## I. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### A. Ծրագիրը

1. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիրը (ՔԿԶՆԾ) ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից՝ բազմատրանշ ֆինանսավորման ծրագրի ներքո: Տրանշ 1-ը հաստատվել էր 2011թ. մայիսի 9-ին և կազմել 60 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ Տրանշ 2-ը հաստատվել էր 2015 թվականի սեպտեմբերի 29-ին և կազմել 150 միլիոն ԱՄՆ դոլար: Տրանշ 1-ի շրջանակներում Ծրագիրը բաժանված է 2 ենթածրագրի: Ենթածրագիր 2-ը՝ 3.7 կմ երկարությամբ, ներառում է Արշակունյաց պողոտայի ընդլայնումը, Արտաշատի խճուղուց դեպի Շիրակի փողոց նոր միացումը և Արտաշատի մայրուղու ընդլայնումը մինչև Նորագավիթի 1-ին փողոց: Իրականացնող գործակալությունը Երևանի քաղաքապետարանն է (ԵՔ):

2. Ծրագիրը դասակարգվել էր որպես Ա կարգի ծրագիր՝ հարկադիր տարաբնակեցման (ՀՏ) պատճառով: Հողերի օտարման և տարաբնակեցման (ՀՕՏ) իրականացմանը օժանդակելու նպատակով, Ծրագրի տարածքը բաժանվել էր հետևյալ երեք մասերի, որոնց համար պատրաստվել էին Հողերի օտարման և տարաբնակեցման առանձին ծրագրեր (ՀՕՏՕ):

ՀՕՏՕ 1 - Արշակունյաց փողոցի հատվածը և Արտաշատի մայրուղու հատվածը

ՀՕՏՕ 2 – Արգավանդի մայրուղու հատվածը

ՀՕՏՕ 3 – Շիրակի փողոցի նոր հատվածը

3. Ենթածրագիր 2-ի ազդեցությունը զգալի էր, քանի որ ավելի քան 200 մարդ կրել էր այդ ազդեցությունը, որի համար մշակվել և հաստատվել էր ՀՕՏՕ 3-ը, ԱԶԲ-ի կողմից՝ 2014 թվականի մայիսի 12-ին, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ 2014 թվականի սեպտեմբերի 11-ին: Բողոքաբերի տան գտնվելու վայրը ընդգրկվել էր ՀՕՏՕ 3-ում: ՀՕՏՕ-ի իրականացումը սկսվել էր 2014 թվականին և ավարտվել՝ 2015 թվականի հուլիսին: Ենթածրագիր 2-ի շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2015թ. սեպտեմբերին: Ճանապարհը շահագործվում է 2016 թվականի դեկտեմբերից: Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) ստեղծվել է ՀՕՏՕ-ի իրականացման ընթացքում՝ ստանալու ազդակիր անձանց մտահոգություններն ու բողոքները և օժանդակելու դրանց լուծմանը: Տրանշ 1-ի շրջանակներում իրականացվող աշխատանքները ազդեցություն են գործել ընդհանուր առմամբ 248 ընտանիքի վրա, և 2015 թվականի հուլիսին վճարվել է 2,389 միլիոն ՀՀ դրամ ընդհանուր գումար (6,03 միլիոն ԱՄՆ դոլար)՝ որպես փոխհատուցում:<sup>1</sup>

4. ՔԿԶՆԾ-ին վերաբերող բողոքները հիմնականում վերաբերում են Տրանշ 1-ի ներքո փաթեթներին, որոնց ընդհանուր թիվը 75 է, ինչն արձանագրված է Ծրագրի հետ կապված բողոքների տեղեկամատյանում 2017 թվականի հոկտեմբերի դրությամբ, իսկ Տրանշ 2-ի ներքո դրանք 8-ն են: Տրանշ 1-ում փակման ենթակա ութ բողոք է մնացել, ներառյալ այս բողոքը, և մեկ այլ նմանատիպ գործ կարգավորվում է Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության կողմից (ԿԱԱՎ):

<sup>1</sup> Արտարժույթի փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 472.89 ՀՀ դրամ, 2015թ. հուլիս

## B. Բողոքը

5. Բողոքաբերի բնակելի տունը կառուցվել էր 1998 թվականին: Հայաստանում ԱԶԲ-ի մշտական ներկայացուցչությանն ուղղված՝ 2015 թվականի հոկտեմբերի 28-ով թվագրված առաջին բողոքում՝ ճանապարհային շինարարության մեկնարկից առաջ, Բողոքաբերը մտավախություն էր հայտնել, որ ճանապարհի շինարարությունը կվնասի նրա տունը, որն արդեն վատթարացած վիճակում էր, և խնդրել էր, որ պետքի համապատասխան մասնագետները գնահատեն այդ ռիսկը: 2015 թվականի նոյեմբերի 27-ին ՀՄՆ-ն խորհուրդ էր տվել, որ պետքի Բողոքաբերը «հետևի Ծրագրի ԲԼՄ-ին», քանի որ այդ նույն օրը նույն բողոքը ներկայացվել էր Ծրագրի իրականացման գրասենյակ (ԾԻԳ): Պատկեր 1-ը ցույց է տալիս Բողոքաբերի տան գտնվելու վայրը և մուտքի ճանապարհի արտաքին սահմանից մինչև Բողոքաբերի տունը հեռավորությունը:

6. Ճանապարհի մոտ գտնվող կառույցները, որոնք ընդգրկված էին ՀՕՏՕ-ում, քանդման էին ենթարկվել: Նմանատիպ մի տուն հարակից էր և ուներ Բողոքաբերի տան հետ ընդհանուր պատ: Արդյունքում, ներքին պատը և դրա տակ գտնվող հիմքերը բացվել էին և ենթարկվել կլիմայի անձրևների, սառեցման/հալման ազդեցությանը: Բողոքի երկրորդ նամակը ուղարկվել էր ՀՄՆ 2016 թվականի հունիսի 29-ին: Ի լրումն առաջին նամակում արտահայտված մտահոգությունների, Բողոքաբերը նշում էր, որ ճանապարհաշինության հետևանքով առաջացել են մի շարք ճեղքեր և այլ վնասներ: ԱԶԲ-ի խնդրանքով ԾԻԳ-ը դրանք ուսումնասիրել էր և զեկուցել, որ «ճեղքերը և այլ վատթարացումները, ընդհանուր առմամբ, անփոփոխ են մնացել, և հնարավոր չէր գնտել ապացույցներ, որ ճանապարհային շինարարության գործունեությունը ազդեցություն է ունեցել տան վրա»<sup>2</sup>: Նույն զեկույցը ուղարկվել էր Բողոքաբերին՝ խոստանալով, որ «շինարարության փուլում կանցկացվեն հետագա քննություններ»: Ըստ ՀՄՆ-ի, շինարարության սկզբում կապալառուն մի քանի անգամ բանավոր կերպով առաջարկել էր վերանորոգել շրջակա տարածքը և վերակառուցել արտաքին պատը, սակայն Բողոքաբերը մերժել էր այդ առաջարկը:

7. 2016 թվականի հոկտեմբերի 21-ին ԾԻԳ-ը Ծրագրի նախագծման և վերահսկման ինժեներներին (*EGIS International*) ներկայացրել էր թարմացված հաշվետվություն՝ մեղմացնող գործողությունների մանրամասն նկարագրությամբ (վերանորոգել շրջակա տարածքը և վերակառուցել տան արտաքին պատը), ինչպես նաև Բողոքաբերին էր ուղարկել համապատասխան նամակ և թարմացված հաշվետվությունը՝ առաջարկելով իրականացնել պահանջվող գործողությունները, 2016 թվականի հոկտեմբերի 31-ին: Միևնույն ժամանակ, Բողոքաբերը ՀՄՆ-ին ներկայացրել էր «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԽԱԳԻԾ» ՄՊԸ-ի կողմից պատրաստված՝ սեփական քննության հաշվետվությունը, որտեղ գնահատվում է տան վիճակը և առաջարկվում են մեղմացնող միջոցառումներ (ներառյալ՝ տան հիմքի վերակառուցումը): Հաշվետվության մեջ ասվում է, որ տունը «վնասված է» և գտնվում է 2-րդ և 3-րդ աստիճանի վթարային վիճակում, իսկ նկուղը՝ 4-րդ աստիճանի վթարային վիճակում: Ճեղքերը և այլ վնասները պատկերող տեսանյութերը՝ սկավառակով /CD/, տրամադրվել են Բողոքաբերի կողմից և գտնվում են ՕՀՀԳ-ի արխիվում: Ամենայն հավանականությամբ, քանի որ հաշվետվությունները զուգահեռաբար են պատրաստվել, *EGIS*-ի հաշվետվությունը հաշվի չի առնվել Բողոքաբերի կողմից:

<sup>2</sup> 2016 թվականի հուլիսի 6-ին «EGIS International» կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունը:



8. Բողոքաբերը նաև պնդում էր, որ իրենց տան հեռավորությունը ճանապարհից կազմում է 5-7,5 մետր: Բողոքի նամակում նշվում է, որ ազգային կանոնակարգերի համաձայն՝ «ճանապարհի հիմնական հատվածների եզրերի հեռավորությունը բնակելի շենքերից պետք է լինի ոչ պակաս, քան 50 մ, իսկ աղմուկից պաշտպանող սարքերի ընդունման պարագայում՝ ոչ պակաս, քան 25 մ»: Բացի իրենց տան և ճանապարհի միջև հեռավորությունից, նշվում էր նաև, որ տեղափոխված խողովակները (գազի, ջրի, ջրահեռացման և հեռախոսի) գտնվում են իրենց սեփականությանը շատ մոտ, ինչը ազգային օրենքի ևս մեկ խախտում է: Բողոքաբերը պահանջել էր համապատասխան և արդար փոխհատուցում՝ Ծրագրի շրջանակում շինարարության և/կամ շահագործման արդյունքում նրա ունեցվածքին հասցված վնասների համար:

### C. Քննության ենթակա լինելու մասին որոշումը

9. ԾՀՀԳ-ի աշխատակիցները քննարկել էին բողոքը Ծրագրի թիմի հետ, ուսումնասիրել էին փաստաթղթերը և Բողոքաբերի հետ անցկացրել հեռուստա-/վիդեո-հանդիպումներ՝ քննության ենթակա լինելու մասին որոշումը կայացնելու նպատակով: Ծրագրերի հատուկ համակարգողը (ԾՀՀ) եզրակացրել էր, որ բողոքը համապատասխանում է ԱԶԲ-ի Հաշվետվողականության մեխանիզմի՝ քննության ենթակա լինելու չափորոշիչներին՝ խնդիրների լուծման գործառնության շրջանակներում, և, այնուհետև՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ին, հայտարարել էր, որ բողոքը ենթակա է քննության:

## II. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ և ԳՆԱՀԱՏՈՒՄ

### A. Նպատակներ և մեթոդաբանություն

10. ԾՀՀԳ-ի՝ ուսումնասիրություն և գնահատում իրականացնող առաքելության<sup>3</sup> գործուղման նպատակներն էին. (i) ավելի լավ հասկանալ բողոքի նախապատմությունը և բողոքի հիմնական խնդիրները, (ii) հայտնաբերել հիմնական շահագրգիռ կողմերին և հասկանալ նրանց տեսակետները Բողոքողաբերի կողմից ներկայացրած խնդիրների վերաբերյալ, (iii) ուսումնասիրել, թե որքանով են շահագրգիռ կողմերը պատրաստ համատեղ ջանքերով լուծել խնդիրը և թե լուծման ինչ տարբերակներ կան, և (iv) առաջարկել գործողությունների պլան՝ իրականացման հստակ ժամանակացույցով: Ուսումնասիրությունն ու գնահատումը ներառում էին փաստաթղթերի ուսումնասիրություն, Բողոքաբերի հետ անհատական հարցազրույցներ, Ծրագրի թիմի և Ծրագրի խորհրդատուների հետ քննարկումներ և ԵԲ-ի հետ հանդիպումներ: Առաքելությունը հանդիպել էր նաև Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների փոխնախարարի հետ վերլուծելու և քննարկելու նպատակով:

<sup>3</sup> Ծրագրերի հատուկ համակարգող՝ պրն. Ջեյմս Ուորեն Էվանս, և Համակարգման ավագ մասնագետ՝ տիկին Սուշմա Կոտագիրի:

## Պատկեր 1

Բողոքաբերի տան գտնվելու վայրը՝

Մուտքի ճանապարհի արտաքին սահմանի և Բողոքաբերի տան միջև հեռավորությունը

Ծրագրի ճանապարհի նկատմամբ



### B. Շահագրգիռ կողմերի հայտնաբերում

11. Տեղում ուսումնասիրության և գնահատման արդյունքում հայտնաբերվել էին հետևյալ շահագրգիռ կողմերը.

#### 1. Բողոքաբերը

12. Բողոքաբերի ընտանիքը՝ ամուսնու գլխավորությամբ, և նրա կինը՝ որպես բողոքի համահեղինակ, ծրագրի ազդեցությունից տուժած տան բնակիչներն են: Նրանք նշանակել էին նրանց իրավաբանին՝ որպես ներկայացուցիչ: Սկզբնական շրջանում Բողոքաբերը խնդրել էր իր ինքնությունը գաղտնի պահել: Մակայն, հաշվի առնելով ՀՄՆ-ի, ԵՔ-ի, ԲԼՄ-ի և դատական համակարգի հետ ներգրավվածությունը, Բողոքաբերն ընդունել էր, որ անհրաժեշտ չէ կամ հնարավոր չէ գաղտնի պահել ԾՀՀԳ այս գործը:

#### 2. Երևանի քաղաքապետարանը

13. Ծրագիրն իրականացնող գործակալությունը ԵՔ-ն է, որը պատասխանատու է Ծրագրի ընդհանուր կառավարման համար, այդ թվում՝ շինարարական աշխատանքների նախագծման և իրականացման, ինչպես նաև ՀՕՏԾ-ի իրականացման վերահսկողության համար:

#### 3. Հայաստանում մշտական ներկայացուցչություն

14. ԱԶԲ-ի Ծրագրի վերահսկողությունը հանձնարարվել էր ՀՄՆ-ին: Որպես այդպիսին, ՀՄՆ-ն պատասխանատու է Ծրագրի իրականացման մոնիտորինգի և վերահսկման համար:

### C. Առաքելության արդյունքները և համաձայնեցված գործողությունները

15. Նախքան ՕՀՀԳ-ի առաքելությունը, Բողոքաբերի և ԵԲ-ի միջև փոխհարաբերությունները վատթարացել էին այն աստիճանի, որ շփումը դադարեցվել էր: Կողմերից ոչ մեկը չէր վստահում մյուսին և չէր ցանկանում նրա հետ հանդիպել: 2016 թվականի նոյեմբերի 30-ին Բողոքաբերը դիմել էր Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների Ընդհանուր իրավասության դատարան՝ ներկայացնելով հայց ընդդեմ ԵՄ-ի: Բողոքաբերի ունեցվածքին հասցված վնասների տեսակների և խորության վերաբերյալ առկա էին խիստ թերի ըմբռնումներ՝ Բողոքաբերն իր տան գրեթե յուրաքանչյուր կառուցվածքային թերության համար մեղադրում էր Ծրագիրն ու ԵԲ-ն, իսկ ԵԲ-ն չէր ընդունում այն իրողությունը, որ Ծրագրի արդյունքում իսկապես զգալի վնասներ էին հասցվել:
16. ՀՄՆ-ն հանձնարարել էր անկախ ինժեներական գնահատում անցկացնել՝ ուսումնասիրելու Բողոքաբերի տունը և այլ հարակից կառույցները, որոնք ենթադրաբար վնասվել էին շինարարության և/կամ շահագործման արդյունքում: ՕՀՀԳ-ն խնդրել էր իրեն ներկայացնել գնահատման արդյունքները նախքան Երևան կատարած առաքելությունը: Բարեբախտաբար, Բողոքաբերը վստահություն հայտնեց անկախ ինժեների հանդեպ և, ինչպես Բողոքաբերը, այնպես էլ ԵԲ-ն ի վերջո համաձայնեցին օգտագործել անկախ ինժեների հաշվետվությունը և ծախսերի նախնական հաշվարկը՝ որպես փոխհատուցման փաթեթի վերաբերյալ բանակցությունների հիմք: Անկախ ինժեները հաստատել էր, որ իր հաշվետվության մեջ ներկայացված հիմնական բացասական ազդեցություններն առաջացել էին Ծրագրի պատճառով: Առավել լուրջ վնասված էր արտաքին պատր, որը նախկինում եղել է ընդհանուր ներքին պատ, և շենքի հիմքերի մի մասը բացվել էր: Բացի այդ, Ծրագրի շրջանակում շինարարությունը որոշակի կառուցվածքային վնաս էր պատճառել օժանդակ շինությանը և, հավանաբար, առաջացրել էր կրորդ հարկի պատերին արդեն իսկ գոյություն ունեցող ճեղքերի որոշակի խորացում: Անկախ ինժեները բացատրել էր, որ դա մեծ մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրորդ հարկը կառուցվածքային տեսակետից պակաս կայուն է, քան առաջին հարկը և, հետևաբար, ճանապարհային շինարարության ժամանակ ավելի զգայուն է վիբրացիայի նկատմամբ: Նա նաև նշել էր, որ նկուղի վթարային վիճակը<sup>4</sup> աստիճանաբար էր առաջացել (առնվազն 15 տարվա ընթացքում), խոնավության ազդեցության տակ, սակայն չի բացառվում, որ Ծրագրի պատճառով առաջացած ներթափանցման արդյունքում խոնավության ազդեցությունն ուժեղացել է: Անկախ ինժեները տրամադրել էր վերականգնողական աշխատանքների հետ կապված ծախսերի մոտավոր նախնական հաշվարկ, որը ՕՀՀԳ-ն օգտագործել էր որպես ելակետ Բողոքաբերի և ԵԲ-ի հետ նախնական քննարկումների ընթացքում:
17. Երբ կողմերից յուրաքանչյուրը (թե՛ Բողոքաբերը, և թե՛ ԵԲ-ն) համաձայնեց, որ դրամական փոխհատուցման մասին բանակցությունների մեկնարկային կետը պետք է

<sup>4</sup> «Նկուղը» (ավելի շուտ՝ հողի մեջ փորած նկուղը) շփության առարկա էր դարձել նախքան ՕՀՀԳ-ի առաքելությունը: Կար կարծիք, որ Բողոքաբերը վնասել էր իր սեփական կառույցը՝ հիմքի տակ նկուղ փորելով և այնուհետև մեղադրելով Ծրագիրը վատթարացման և վտանգավոր վիճակի համար: Առաքելությունը պարզել է, որ նկուղը նախկինում եղած տանը կից՝ հին նկուղ է եղել, և, երբ տունն ընդլայնվել է, այն տարածվել է նկուղի մի մասի վրա:

լինի անկախ ինժեների կողմից ներկայացված՝ Բողոքաբերի գույքին հասցված և Ծրագրի շինարարության և/կամ շահագործման հետ ուղղակիորեն և անուղղակիորեն կապված վնասների վերանորոգման/վերակառուցման ծախսերի ավելի մանրամասն նախնական հաշվարկ, ՄՀՀԳ-ի օգնությամբ համաձայնություն ձեռք բերվեց գործողությունների պլանի վերաբերյալ, որը ներառում էր հետևյալ քայլերը.

- (i) վերանայել ծախսերի նախնական հաշվարկը՝ աշխատանքի համաձայնեցված ծավալներին համապատասխան,
- (ii) համաձայնություն ձեռք բերել ԵՔ-ի կողմից Բողոքաբերին վճարվելիք՝ փոխհատուցման գումարի մասին,
- (iii) կազմել և ստորագրել ԵՔ-ի և Բողոքաբերի միջև իրավաբանական համաձայնագիր՝ փոխհատուցման համաձայնեցված գումարի մասին,
- (iv) Բողոքաբերը ետ է կանչում դատական գործը, և
- (v) ԵՔ-ն Բողոքաբերին է վճարում փոխհատուցման համաձայնեցված գումարը:

Այնուհետև կողմերը համաձայնել էին, որ այդ քայլերը պետք է ավարտվեն մինչև 2017 թվականի տարեվերջ:

18. ՄՀՀԳ-ի առաքելությունից հետո անկախ ինժեները ներկայացրել էր աշխատանքների մանրամասն ծավալի նկարագրությունը, այդ թվում՝ Բողոքաբերի գույքի վերականգնման և ամրապնդման ծախսերը: Անկախ ինժեները նաև զգուշացրել էր, որ նկուղի հետագա օգտագործումը վտանգավոր է մարդկանց կյանքի և առողջության համար (նկուղի տեխնիկական վիճակը չորրորդ աստիճանի վթարային է), ուստի այն պետք է լիցք արվի և փակվի:
19. ՀՄՆ-ի Ծրագրի թիւը մշակել է Ողղիչ գործողությունների պլան (ՈԻԳՊ)՝ ԱԶԲ-ի Երաշխիքների քաղաքականության դրույթների համաձայն: ՈԻԳՊ-ում առաջարկվում է Բողոքաբերին վճարվելիք փոխհատուցման գումարի չափը՝ տեխնիկական քննության հիման վրա: Ճշգրտված և գնահատված ազդեցությունների համար փոխհատուցման բոլոր ծախսերը կվճարվեն Տրանս 1-ի ՀՕՏՕ 3-ի անկանխատեսելի հանգամանքների համար նախատեսված գումարից: ՈԻԳՊ-ն հաստատվել է Կայուն զարգացման և կլիմայի փոփոխության խնդիրներով զբաղվող վարչության Շրջակա միջավայրի և երաշխիքների բաժնի կողմից, քանի որ դասվել է Ա կարգի՝ ՀՏ-ի պատճառով:
20. ՀՄՆ-ի տնօրենը համաձայնել էր Բողոքաբերի և ԵՔ-ի միջև հետագա գործընթացը դյուրացնել և իրականացնել վերը նշված գործողությունները՝ ՄՀՀ-ի հետ մանրամասն խորհրդակցելով: Ի թիվս այլ միջոցառումների, ՀՄՆ-ի կողմից օրեցօր ցուցաբերվող աջակցությունը չափազանց կարևոր էր այս գործի հաջող և պատեհաժամ փակման համար՝ (i) ներգրավվել էր հայ իրավաբան՝ աջակցելու Բողոքաբերի և ԵՔ-ի միջև բանակցություններին և իրավաբանական հանձնարարագրի նախագծի մշակման գործընթացին, և (ii) ՀՄՆ-ն ուղղակիորեն միջնորդել էր փոխհատուցման գումարի վերաբերյալ վերջնական համաձայնության ձեռք բերմանը:
21. 2017 թվականի դեկտեմբերի 5-ին Բողոքաբերը և ԵՔ-ն ստորագրել են իրավաբանական համաձայնագիրը, և փոխհատուցման համաձայնեցված գումարը՝ 5,971,031.63 ՀՀ դրամ (12,388 ԱՄՆ դոլար) վճարվել է Բողոքաբերին 2017 թվականի

դեկտեմբերի 7-ին: Համաձայնագրով նախատեսված է բավարար ֆինանսավորում՝ հատուցելու Բողոքաբերի սեփականությանը հասցված բոլոր վնասները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել կամ վատթարացել են Ծրագրի շրջանակում շինարարության և/կամ շահագործման արդյունքում: Բողոքաբերը պարտավորություն է ստանձնել՝ ավարտելու համաձայնեցված նախագծում նկարագրված աշխատանքները վճարման պահից հետո մեկ տարվա ընթացքում: ԿԱԱՎ-ը կաջակցի ստուգման գործընթացին՝ հաստատելու աշխատանքների ավարտը համապատասխան փուլերում, և այդ մասին կտեղեկացնի ԾՀՀԳ-ին:

#### D. Քաղված դասերը

22. **Ծրագրի ԲԼՄ-ն.** Ծրագրի ԲԼՄ-ն գործարկվեց ՀՕՏԾ-ի իրականացման ընթացքում: Հայեցակարգային տեսակետից, եթե ԲԼՄ-ն գործարկված լիներ ՀՕՏԾ-ի հաստատման պահին, հնարավոր է, որ սույն բողոքի նման բողոքները ավելի արդյունավետ կերպով կառավարված լինեին:

23. **Ծրագրի նախագծման գործընթացը.** Ապագայում նմանատիպ տրանսպորտային ծրագրեր նախապատրաստելիս, անհրաժեշտ է հաշվի առնել և ներառել վիբրացիայի և աղմկի գնահատում, ինչպես նաև ակնկալվող ազդեցությունների մեղմացմանն ուղղված համապատասխան գործողություններ:

24. **Ծրագրի վերահսկողություն.** Ծրագրի վերահսկողության բարելավումը, հնարավոր է, կօգներ խուսափել բողոքը ԾՀՀԳ-ի մակարդակին հասցնելուց: Բողոքի լուծման հետաձգումը անվստահություն առաջացրեց Բողոքաբերի մոտ ԵՔ-ի նկատմամբ, ինչը հանգեցրեց լրացուցիչ ծախսերի (խնդիրների լուծման գործընթացը) և ՈԻԳՊ-ի հետ կապված փաստաթղթերի մշակմանը: Եթե ազդեցությունը հայտնաբերված լիներ և մեղմացման միջոցառումների շուրջ պայմանավորվածություն ձեռք բերվեր այն ժամանակահատվածում, երբ կապալառուն աշխատանքներ էր իրականացնում տեղում, այդ միջոցառումները ներառված կլինեին կապալառուի՝ շրջակա միջավայրի հետ կապված խնդիրների կառավարման պլանում: Սակայն այս փուլում, երբ աշխատանքներն ավարտված են, կապալառուի՝ թերությունները վերացնելու պարտավորությունների ցանկում այս աշխատանքների ներառումը խնդրի պատեհաժամ լուծումը կդարձնի անհնար:

### III. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

25. Սկզբնական շրջանում ԾՀՀԳ-ի առաքելությունը սահմանափակվում էր բողոքի ուսումնասիրությամբ և գնահատմամբ: Սակայն շահագրգիռ կողմերի հետ սկզբնական հանդիպումներից հետո պարզ դարձավ, որ հնարավոր է համաձայնություն ձեռք բերել գործը արագ փակելուն ուղղված քայլերի վերաբերյալ: Բոլոր շահագրգիռ կողմերի պատրաստակամությունը՝ մասնակցելու և համագործակցելու, չափազանց կարևոր էր խնդրի լուծման համար: Հիմնական գործոնները, որոնք նպաստել են գործի պատեհաժամ և հաջող լուծմանը, հետևյալն են.

- անկախ ինժեների կողմից կատարված ուսումնասիրությունը, ինչպես նաև անկախ ինժեների վերլուծության և առաջարկությունների հանդեպ Բողոքաբերի վստահության բարձր մակարդակը կարևոր դերակատարություն ունեցան հետևյալի

շուրջ համաձայնությունն ձեռք բերելու գործընթացում. (i) Ծրագրի շրջանակում շինարարության և/կամ շահագործման հետևանքով Բողոքաբերի գույքին հասցված վնասների և (ii) փոխհատուցման ընդհանուր գումարի վերաբերյալ.

- ԾՀՀԳ-ի պատեհաժամ գործողությունները. Բողոքաբերին արագ արձագանքելը, այդ թվում, բողոքի՝ քննության ենթակա լինելու մասին որոշումն ընդունելուց հետո երկու շաբաթվա ընթացքում դեպի Երևան առաքելություն ուղարկելը, հանգեցրել են ԱԶԲ-ի նկատմամբ Բողոքաբերի կողմից վստահության բարձր մակարդակին,
- ԵՄՆՏ-ի, ՀՄՆ-ի անմիջական ներգրավվածությունը և ԿԱԱՎ-ի կառավարիչների և Պորտֆելի, երաշխիքների և գենդերային հարցերով բաժնի սերտ աջակցությունը՝ բանակցությունների հետագա գործընթացը վարելու ընթացքում և մինչև գործի փակումը, օգնեցին ամրապնդել Բողոքաբերի վստահությունը և նպաստեցին բոլոր կողմերի ներգրավվածությանը,
- ՀՄՆ-ի սերտ համագործակցությունը և աջակցությունը ԾՀՀԳ-ի ամբողջ գործընթացի և առաքելության ընթացքում,
- գերազանց թարգմանիչ՝ խնդրի և դրա կարգավորման խթանման գործընթացի հստակ ընկալմամբ, և
- բարձր մասնագիտական որակավորում ունեցող իրավախորհրդատու, ով աջակցում էր Բողոքաբերի և ԵԲ-ի միջև իրավաբանական համաձայնագրի նախագծի մշակման և բանակցությունների ընթացքում:

26. ԾՀՀԳ-ն կշարունակի աշխատել Ծրագրի թիմի հետ միասին, ինչպես պահանջվում է, և առաքելություն կգործուղի՝ ստուգելու իրականացումը, ինչը կարող է անհրաժեշտ լինել քաղված դասերը փաստաթղթավորելու համար: ԿԱԱՎ-ը խնդրել է, որպեսզի ԾՀՀԳ-ն 2018 թվականին անցկացնի բողոքների և խնդիրների լուծման կարողությունների զարգացման դասընթաց Ծրագրի համապատասխան աշխատակիցների համար: ՔԿՂՆԾ բողոքի դեպքից քաղված դասերը կհարստացնեն այդ դասընթացը:

27. ԾՀՀԳ-ն խորհրդակցել է Բողոքաբերի հետ և պարզել, որ նա գոհ է իր մտահոգությունների պատճառը վերացնելունն ուղղված՝ ԾՀՀԳ-ի միջամտությունից: Այսպիսով, ԾՀՀԳ-ն բողոքը համարում է փակված:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱԶԲ-ին ուղարկված՝ Բողոքի նամակը

Ուղված է՝ Ասիական զարգացման բանկ  
 Ճապոնիա, Տոկիո 100-6008,  
 Կասումիգասեկի, շենք 8F,  
 3-2-5 Կասումիգասեկի Չիոդա-կու

Ումից՝ Նորայր Մկրտչյանից  
 Հայաստանի Հանրապետություն, Երևան,  
 Արշակունյաց փողոց 286/21  
 Հեռ.՝ +374 99 377 271

**Դիմում**

Ես Նորայր Մկրտչյանն եմ, ապրում եմ Երևանում, Արշակունյաց 286/21 հասցեով: Տունը, որտեղ ես բնակվում եմ, կառուցվել է 1999 թ.-ին: 04.11.2015-ից սկսվել էին «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարական աշխատանքները, որոնք տևում էին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 10-ը: Հյուսիս-հարավ ավտոմայրուղու շրջանակում քանդման աշխատանքների ժամանակ, քանի որ իմ տունը գտնվում է ճանապարհի առաջին գծում և ենթարկվում է օգտագործվող ծանր տեխնիկայի ուղղակի ազդեցությանը, առաջացել են ճաքեր, որոնք աստիճանաբար մեծանում են հարվածող տեխնիկայի և այլ արտաքին ազդեցությունների հետևանքով:

Իմ տան անմիջական հարևանությամբ գնտվող տան քանդման արդյունքում մեր տան ներքին պատը դարձել է արտաքին պատ, բացվել են տան հիմքերը, ինչի հետևանքով խոնավություն է ներթափանցում և տունը դարձել է վթարային, և յուրաքանչյուր անձրևից և ձյունից հետո ջուրը հոսում է դեպի իմ տան հիմքը: Այդ աշխատանքների պատճառով իմ տունը կորցրել է իր ամրությունը, քանի որ իմ տունը թափահարվում էր տրակտորների աշխատանքի ընթացքում: Մշտական վիբրացիայի և տատանումների պատճառով երկրորդ հարկի պատերի և առաստաղի վրա ձեղքեր են հայտնվել, և պատերի ներքին մասերը զգալիորեն խոնավացել են:

Պետք է նաև նշել, որ իմ տան հեռավորությունը ճանապարհից ընդամենը 5 մետր է, մինչդեռ, համաձայն աղյուսակ 1CH ՊՎ IV-11.05.02-99-ի կետի 4.9-ի՝ այն պետք է լինի 100 մետր: Այս ամիսների ընթացքում ես մի քանի անգամ բողոքել եմ ԱԶԲ-ին, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին, ՀՀ վարչապետին, Երևանի քաղաքապետին, Երևանի քաղաքապետարանին, Երևանում ներդրումային զարգացման ծրագրերի վարչության (ՊՈԱԿ) ղեկավարությանը:

Տեսնելով այն վիճակը, որում հայտնվել է իմ տունը, նրանք ընդունեցին իրենց մեղքը, բայց տունը լքելուց հետո մոռացան իրենց խոստումները և ոչինչ չարեցին ինձ օգնելու համար:

CH 2.07.01-89-ի 6.19-րդ կետի համաձայն, հիմնական ճանապարհների անցուղիների եզրերից մինչև բնակելի շենքի գիծը հեռավորությունը պետք է կազմի ոչ պակաս, քան 50 մ, իսկ աղմկից պաշտպանող սարքավորումների ընդունման դեպքում, CH P II-12-77-ի համաձայն՝ ոչ պակաս, քան 25 մ:

Փողոցների, տեղական անցուղիների կամ երթևեկելի հատվածների եզրերից մինչև շենքի գիծը հեռավորությունը պետք է կազմի 25 մետրից ոչ պակաս: Նշված հեռավորությունը գերազանցելու դեպքում, շենքի գծից հեռավորությունը պետք է լինի ոչ թե 5 մետր, այլ 6 մետր լայնությամբ գիծ, որպեսզի այն անցանելի լինի հրշեջ մեքենաների համար:

Ես ինժեներ էի վարձել «ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՍ» ընկերությունից: Նա նշել է, որ տունը վնասված է և 2-րդ -3-րդ աստիճանի վթարային, իսկ նկուղը՝ 4-րդ աստիճանի վթարային:

Տան հիմքը կազմող բետոնը քայքայվել է այնպես, որ նույնիսկ կարելի է կոտրել այն և ձեռքերով այն փռել: Սույն փաստաթղթին կից ներկայացնում եմ տեսագրությունը, որի օգնությամբ դուք կարող եք համոզվել, որ վերը նշվածը ճշմարիտ է: Ցանկանում եմ նաև նշել, որ իմ տանից մի քանի մետր հեռավորության վրա 4 տարբեր խողովակներ են անցնում ասֆալտի տակով /գազի, ջրի, ջրահեռացման, և հեռախոսակապի/, ինչը դարձյալ օրենքի խախտում է:

Ընտանիքիս կազմում կա 7 հոգի՝ Նորայր Մկրտչյան, Արուսյակ Գրիգորյան, Էդուարդ Մկրտչյան, Քրիստինե Խորենյան, Նորայր Էդուարդի Մկրտչյան, Արուսյակ Էդուարդի Մկրտչյան, Անգելինա Էդուարդի Մկրտչյան:

Կցանկանայի նաև ձեր ուշադրությունը հրավիրել անվտանգության խնդրին, քանի որ ճանապարհը գտնվում է իմ տան վերևում, և ընտանիքս ավտովթարներից երաշխավորված չէ: Այսպիսով, ամբողջ ընտանիքը ապրում է ահը սրտում, քանի որ, մի կողմից, տունը կարող է մեկ օր փլուզվել, մյուս կողմից՝ որևէ մեքենա կարող է հարվածել տանը:

Մենք պահանջում ենք արդարություն և, եթե արդարությունը չվերականգնվի, մենք կդիմենք Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Հարգանքներով և հույսով,

Նորայր Մկրտչյան

### ՀԱՎԵԼՎԱԾ 2. Վնասների և տեղում անցկացված գնահատման լուսանկարները



Ճեղքեր տան տարբեր մասերում



Այս պատը եղել է «ներքին» պատ, բայց այժմ արտաքին է և դեպի տուն անձրևաջրերի ներհոսքի պատճառ է դառնում:



Լուսանկարը ցույց է տալիս շենքի հեռավորությունը կառուցված ճանապարհից: